ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԳՅՈՒՄՐԻ-ՈՂՋԻ-ՄԵՂՐԱՇԱՏ-ԲՅՈՒՐԱԿՆ» ԹԻՎ 07-058 ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻՆ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրություն՝ հետևյալ թափուր ավտոբուսային երթուղիների **ժամանակավոր սպասարկման** համար՝

N ը/կ	ԵՐԹՈՒՂՈՒ՝			
	անվանումը և համարը	սկզբնակետը	վերջնակետը	սպասարկման համար պահանջվող հիմնական և պահուստային ավտոբուսների քանակը
1.	«Գյումրի-Ողջի-Մեղրաշատ-Բյուրական» թիվ 07 - 058	Գյումրու ԱԿ	Բյուրական	1 հիմնական, 1 պահուստային

ՑԱՆԿ

ԵՐԹՈՒՂԻՆ ՍՊԱՍԱՐԿԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

1. Հայտ՝ N 2 ձևի:

2. Ավտոբուսների գրանցման վկայագրեր (ժամանակավոր կտրոն):

3.Ավտոբուսի նկատմամբ սեփականության կամ օգտագործման իրավունքի առկայությունը հավաստող փաստաթուղթ:

4. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահագործելու համար վերասարքավորելու (կահավորելու) դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ:

5. Հավաքակայանի սեփականության կամ օգտագործման իրավունքը հավաստող փաստաթղթեր, գիշերակացով երթուղիների դեպքում վերջնակետում ավտոբուսների կայանումը, պահպանումը, նախաուղերթային տեխնիկական զննումը և վարորդների բուժզննումն ապահովելու նպատակով կնքված պայմանագրեր:

6. Ավտոկայարանային ծառայություն մատուցող կազմակերպության հետ կնքված սպասարկման նախնական պայմանագիր (գործող պայմանագրի առկայության դեպքում նախնական պայմանագիր չի պահանջվում):

7. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևոր և ուղեբեռ (եթե սահմանված է) փոխադրավարձը, իսկ միջմարզային և ներմարզային

երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների (սույն պահանջը չի վերաբերում համայնքներում անցկացվող մրցույթներին):

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում են մեկ օրինակից, կազմակերպության կողմից սոսնձված և ստորագրված փաթեթով:

Փաթեթները բացելու օրը, ժամը և վայրը՝ 2026 թվականի մարտի 19-ին, ժամը 11:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Երթուղին սպասարկելու իրավունքը ժամանակավոր հատկացնելու համար գնահատման անցկացման օրը, ժամը և վայրը՝ 2026 թվական մարտի 23-ին, ժամը 14:00, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի համայնք, Երևան-Սևան ավտոմայրուղի, 2/14 շենք

Հայտը ներկայացնելու օրը, ժամը, վայրը և վերջնաժամկետը՝ յուրաքանչյուր աշխատանքային օր, մինչև 2026 թվականի մարտի 18-ը, ժամը 17:00, ք. Երևան, Կառավարության 3-րդ մասնաշենք, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

Հեռախոսահամարը՝ լրացուցիչ տեղեկություն ստանալու համար՝ 010511356

Էլեկտրոնային փոստի հասցեն՝ mtai.secretariat@gmail.com:

Երթուղու չվացուցակին կարելի է ծանոթանալ https://api.mtad.am//storage/pages/files/2026/03/pdf/16_11-01-sc789-69b7aababaf78.pdf հղումով: